

օրինակ խեղջութեան մը մէջ իրեն  
անարժան չերենայ :

Ո՞րիամ վախնալով որ ըըլայ թէ  
Յովհաննային անպարտական մահը  
ալ աւելի գրգռէ զժողովուրդն իրեն  
դէմ, ուզեց որ պատուհասը ծածուկ  
կերպով լ սնտրայի աշտարակին մէջ  
կատարուի : « Քաջութեամբ մահուան  
գործիքին վրայ ելաւ Արէյ, ու հոն ե-  
զողներուն դառնալով՝ սրտաշարժ ձայ-  
նով խօսեցաւ հետերնին . բոլոր յան-  
ցանքը իր վրայ կը ձգէր, վասն զի չկըր-  
ցաւ արժանաւոր կերպով հրաժարիլայն  
թագէն՝ որ իր աղետիցը պատճառ ե-  
ղաւ . սակայն իմացուց գարձեալ թէ ա-  
նաշառ և արգարազատ ապագայն պիտի  
հոչակէր իր անմեղութիւնը, և դաւա-  
դրաց նենգութիւնը իմացուէր : Ետքը  
զգեստները հանել տուաւ, ու ինքը  
մէկ կողմանէ աղօթք կ'ընէր . և երբոր  
ամէն բան պատրաստուեցաւ, երկըն-  
ցուց պարանոցը դահճին, և մէկ հա-  
րուածով մը գլուխը մարմնէն բաժնուե-  
ցաւ :

Այսկերպով վախճան ունեցաւ Յով-  
հաննա Արէյ, անգութ փառասիրու-  
թեան մը զոհ եղող օրիորդը : Սակայն  
անմեղութեան յիշատակ՝ մահուանէ  
ալ զօրաւորագոյն ազդեցութիւն կ'ու-  
նենայ . անուշահոտ ծաղիկ մըն է որ  
մեռնողին շիրմին վրայ՝ անոր տիսուր  
մնացորդներէն կարծես թէ աւելի կեն-  
դանութիւն և գեղեցկութիւն կ'առ-  
նու :

Հոս դրած պատկերնիս՝ Յովհան-  
նայի կենացը վերջին վայրկեանները կը  
ներկայացընէ, զոր՝ մեղի ժամանակա-  
կից անուանի գաղղիացի նկարիչ մը,  
Տըլարոշ, պաստառի վրայ առաւ, ու  
1834ին Արուեստահանդէսին մէջ դր-  
նելով՝ ամենէն գովեստ ընդունեցաւ :

### ՀԱԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Թուղր Լենտովեայ Պորլիոսի

### ԶՑԻՍՈՒՄԷ ՆԱԶՈՎՐԵՑԻՈՅ

Հռովմ Սէղարինի անունով դքսին  
պալատին դիւանի խորչից մէջ հետա-  
քըրքրական հնագիր նամակ մը գըտ-  
նուեցաւ լատիներէն լեզուաւ գրուած,  
զոր լ ենտուլոս Պիթլիոս Հքէաստա-  
նի կուսակալը Արուսաղեմէն խրկեր է  
եղեր Հռովմայ Տիբերիոս կայսեր,  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի  
վարուցն և ընթացիցը վրայ համառօտ  
ու Ճիշդ տեղեկութիւն մը տալով :  
Ո՞ենք առանց երաշխաւոր ըլլալու թըլ-  
թոյն վաւեր կամ հարազատ ըլլալուն,  
վստահանալով հրաժարակշին անկեղ-  
ծութեանն ու հաւատարմութեանը,  
կը թարգմանենք հոս զայն ՚ի գիտու-  
թիւն և ՚ի քննութիւն կրօնասէր և  
հնագէտ ընթերցողաց :

« Իմացայ որ փափաք ունիս եղեր  
տեղեկութիւն մի առնուլ երեւելի մար-  
դու մը վրայօք . ուստի տեղն ՚ի տեղը  
կը պատմեմ քեզի աս նամակիս մէջ :  
Ինչպէս որ գիտես՝ մարդ մը երեցաւ  
աս մեր ատեններս Յիսուս անունով,  
որ դեռ ինչուան հիմայ կ'ապրի մեծ ա-  
ռաքինութեամբ և բարի համբաւով,  
ու բոլոր ժողովուրդը նարգարէ առատի-  
նուեան կը կոչէ զինքը : Արեն աշա-  
կերտքն ալ կ'ըսեն թէ ինքն է Այտու-  
ծոյ որդին՝ ստեղծող երկրի և երկնի  
և ամէն արարածոց . և յիշաւի, ով  
կայսր, ամէն օր անանկ զարմանալի բա-  
ներ կը պատմուին վրան օր մարդուն  
հաւատը չիգար, ինչպէս՝ մէկ խօսքով  
մը միայն մեռեներուն յարութիւն տալ,  
հիւանդները բժշկել, տկարները զօ-  
րացընէլ :

Ինքը միջակ հասակով և վայելուչ  
դէմքով անձ մըն է . և անանկ վսեմ  
կերպարանք մը ունի, որ երեսը նայողը  
կը ստիպուի սիրել զինքը, և միանգա-

մայն պատկառիլ իրմէ : Վալխուն մազերը երկու բաժնուած ինչուան ականջները և անկէ ալ դէպ'ի ուսերուն վրայ ձգուած են : Ճակտին մէջ տեղը ըստ սովորութեան նազովրեցւոց փունջ մը մազ ունի . Ճակտը թէպէտ շիտակէ , բայց զուարթ պարզութի մը կընկատես վրան . երեսը ամենեխն կնճռած չէ . քիթը կանոնաւորեալ ձե մը ունի . նըմանապիս ոնդունքը և բերանն ալ համեմատ : Վաթած և անոյշնայուածք մը ունի . ազքերը արեւու պէս փայլուն և լուսաւոր են , անանկ որ չկրնար մարդ երկայն ատեն երեսը նայիլ : Հանդիմանելու ատենը վախ մը կը ձգէ դիմացինին վրայ , իսկ խրատելու ժամանակ կարեկից և ցաւակից կ'ըլլայ . ամենուն ինքզինքը սիրցընել կու տայ . և պաշաճ ծանրութեամբն հանդերձ միշտ զուարթ է . կ'ըսեն թէ ամենեխն խընտացած չէ , բայց պէտք եղած տեղը երբեմն արտասուած : Բազուկներն և ձեռքերը խիստ վայելուչ են :

Ինտանեկան խօսակցութեանց մէջ սիրելի և հաճոյական կերպ մը ունի , և թէպէտ այնպիսի առթից մէջ քիչ անգամ երենայ , բայց ան ալ վայելուչ կերպով : Ըստրհալի և յատուկ դէմք մը ունի , և գծագրութիւնը բոլորովին նման է իր մօրը , որուն համար կ'ըսեն թէ անանկ գեղեցիկ օրիորդ այս կողմերս չէ տեսնուած : Եթէ մեծափառ տէրութիւնդ ուզենայ այս մարդը տեսնել , հրաման տուր ինծի , և մէկէն խաւըեմքեզի : Եր հանձարովն և իմաստութեամբը բոլոր լրուսաղեմացիքը զարմացուցածէ . առանց բան մը սորված ըլլալու ամէն գիտութի և ուսմննք ունի . միշտ բոկոտն ու բաց գլխով կը քաշէ . շատը վրան կը խնտան , բայց թէ որ մէյմը հետը խօսին՝ զամենքը կ'ապշեցընէ . ամենուն բերանն է թէ ասանկ մարդ մը գեռ չէ տեսնուած աս կողմերս . և ինչպէս որ շատ անգամ լսեր եմ Նրէաներէն՝ գեռ մէկը գտնուած չէ որ ասանկ սուրբ և ճշմարիտ սկըզբունքներ սորվեցընէ : Ըստ գիտուն և իմաստուն Նրէայք՝ ածային մարդ մը

կը սեպեն զինքը և կը հաւտան իրեն , և շատերն ալ ընդհակառակն դիմացս գէշ կը խօսին վրանը ըսելով թէ տէրութեանդ դէմ բաներ կը զրուցէ : Վայիսի նախանձոտ և չարասէր Նրէից վրայ շատ նեղացեր եմ : Վսկէ զատ կ'ըսեն թէ դեռ մէկու մըն ալ տհաճութեապատճառ չէ եղած , հապա զամենքը գոչ ըրած իր քաղցր վարմունքովը . ուստի որոնք որ զինքը կը ճանչնան կամ տեսնուած են հետը՝ իրենց հիւանդութիւններէն բժշկուելու համար , ամենքն ալ կը վկայէն թէ ինչ բարիք տեսած են իրմէ : Վակայն այսու ամենայնիւ հնազանդ եմ տէրութեանդ , և ինչ որ կը հրամայես՝ պատրաստ եմ կատարելու , :

ԼԵՆՏՈՒԼՈՍ ՊՈՐԵԱՈՍ

### ԱԾԽԱՄ ՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարդու բնակած ամենեն բարձր բաղաբներն ու տեղուանքը :

Վարդուս կենդանեացմէ գլխաւոր զանազանող բան մ' ալ իր ամէն կլիմացի շուտով յարմարին է : Հուրատապք , թաց ու չոր՝ մարդուս կազմուածքին վրայ տարբերութիւն ընեն ալ նէ , բայց մարդու ուզածին պէս կրնայ անոնց յարմարիլ : Վո բանս թէ և մարդուս բնական կազմուածքին կատարելութենէն առաջ կու զայ , բայց կայ նաև ուրիշ գլխաւոր պատճառ մ' ալ , որ է իր հնարագիւտ ճարտարութիւնը . անովոչ միայն կրնայ ինքզինքը բնութեան յարձակմնանքէն պահպանել , հապա երբեմն ինչուան նաև զբնութիւնը իրեն յարմարցընել : Վայպէս ահա կը տեսնենք որ երկրիս ամէն գօտիներու տակ ալ մարդս կ'ապրի և կը մնանի . ուր կենդանիք չեն՝ կամ շատ դժուարաւ կրնան :

Հոսընթերցողաց հետաքրքրութեանը համար դնենք , Վվկիանոսին երեսէն առած մարդուս բնակած ամենէն բարձըր քաղաքներն ու տեղուանքը .